

1.2.4. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2003թ. հունվարին հանրապետությունում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 2374 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 13 բնակելի շենք կամ 2002թ. հունվարին գործարկված մակերեսի 79.4%-ը, մասնավորապես՝ Մասիսի տարածաշրջանում, համապատասխանաբար՝ 480 և 4, Կոտայքի տարածաշրջանում՝ 540 և 4, ք.Վանաձորում՝ 354 և 2 և ք.Երևանում՝ 1000 քառ.մ և 3 բնակելի շենք:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը

	2002			2003		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2989	78.0	5.6	2374	79.4	3.3

2003թ. հունվարին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսի 100%-ը շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2002թ.՝ 100%):

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: 2003թ. հունվարին հանրապետությունում իրականացվել է 2972.7 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 1516.4 մլն. դրամի, իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 2804.5 մլն.դրամ ,որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 1359.2 մլն. դրամ:

Իրականացված կապիտալ շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2003թ. հունվարին

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %		Ընդհանուրի նկատմամբ, %	
			Իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2972.7	2804.5	156.2	195.3	100	100
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>						
պետական բյուջեի	604.2	589.6	2.4անգամ	2.4անգամ	20.3	21.0
համայնքների միջոցների	10.0	10.0	3.2անգամ	3.2անգամ	0.3	0.3
Համաշխարհային բանկի վարկի	223.9	201.1	174.0	4.7անգամ	7.5	7.2
մարդասիրական օգնության միջոցների	1338.9	1317.6	3.6անգամ	3.7անգամ	45.1	47.0
<i>դրանից.</i>						
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	19.2	19.2	79.3	79.3	0.7	0.7
այլ մարդասիրական օգնության միջոցների	1319.7	1298.4	4.9անգամ	5.2անգամ	44.4	46.3
կազմակերպությունների միջոցների	280.3	173.7	52.7	78.9	9.4	6.2
բնակչության միջոցների	515.4	512.5	89.2	93.0	17.4	18.3

Իրականացված կապիտալ շինարարության ծավալի աճի տեմպերը

	2002			2003		
	իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն. դրամ (ընթացիկ գներով)	%, համադրելի գներով		իրականացվել է կապիտալ շինարարություն, մլն. դրամ (ընթացիկ գներով)	%, համադրելի գներով	
		ճանապարհատարված համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	ճանապարհատարված համապատասխան նկատմամբ		ճանապարհատարված համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	ճանապարհատարված համապատասխան նկատմամբ
Հունվար	1897.5	104.6	11.8	2972.7	156.2	9.4

2003թ. հունվարին իրականացված 2972.7 մլն.դրամի կապիտալ շինարարությունը 2002թ. հունվարի համեմատությամբ աճել է 56.2%-ով:

Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի, 2003թ. հունվարին

(ընթացիկ գներով, մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2972.7	2804.5	100	100
<i>այդ թվում.</i>				
արդյունաբերություն	56.3	31.2	1.9	1.1
գյուղատնտեսություն	423.0	393.3	14.2	14.0
տրանսպորտ և կապ	945.3	845.8	31.8	30.2
առևտուր	91.8	88.9	3.1	3.2
բնակարանային տնտեսություն	901.7	901.7	30.3	32.2
կոմունալ տնտեսություն	131.8	131.8	4.4	4.7
առողջապահություն	0.9	0.9	0.1	0.0
կրթություն	88.1	88.1	3.0	3.1
մշակույթ	256.8	245.8	8.6	8.8
տնտեսության այլ ճյուղեր	77.0	77.0	2.6	2.7

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2003թ. հունվարին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 354 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 2 բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 14.9%-ը:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերն աղետի գոտում

	2002			2003		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%	
		ճանապարհատարված համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	ճանապարհատարված համապատասխան նկատմամբ		ճանապարհատարված համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	ճանապարհատարված համապատասխան նկատմամբ
Հունվար	569	224.0	2.1	354	62.2	0.9

2003թ.հունվարին շահագործման հանձնված բնակելի շենքերի (օգտակար) մակերեսի 100%-ը շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2002թ.՝ 100%):

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: ՀՀ աղետի գոտում 2003թ. հունվարին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 981.4 մլն.դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 33.0%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 319.5 մլն. դրամ (21.1%):

ՀՀ աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2003թ. հունվարին

ընթացիկ գներով, մլն. դրամ

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է կապիտալ շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	981.4	981.4	100	100
<i>այդ թվում ի հաշիվ.</i>				
պետական բյուջեի	142.7	142.7	14.6	14.6
համայնքերի միջոցների	6.0	6.0	0.6	0.6
Համաշխարհային բանկի վարկի	118.1	118.1	12.0	12.0
մարդասիրական օգնության միջոցների <i>դրամից.</i>	653.9	653.9	66.6	66.6
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	19.2	19.2	1.9	1.9
այլ մարդասիրական օգնության միջոցների	634.7	634.7	64.7	64.7
բնակչության միջոցների	60.7	60.7	6.2	6.2